ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«26» «հոկտեմբեր» 2021 թ. № 23-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N444-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 9-րդ և 20-րդ ենթակետերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի նոյեմբերի 19-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, Անտառային կոմիտեի, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի, գործունեության համակարգման և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 25-ի N360-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N444-Լ հրամանի 1-ին կետի՝

1) 2-րդ ենթակետը «է» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «է1» պարբերությունով"

«է1) բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն (որսի կենդանիների և որսահանդակների պահպանության, պաշտպանության ու կայուն օգտագործման, որսի և որսորդական տնտեսության վարման բնագավառների քաղաքականության մշակման գործառույթների մասով)»,

2) 3-րդ ենթակետի «գ» պարբերությունը «վարչություն» բառից հետո լրացնել «(բացառությամբ որսի կենդանիների և որսահանդակների պահպանության, պաշտպանության ու կայուն օգտագործման, որսի և որսորդական տնտեսության վարման բնագավառների քաղաքականության մշակման գործառույթների)» բառերով:

ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

1/26/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012

«26» հունվարի 2021թ.
ք. Երևան